# 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## *5.1. Ժողովրդագրական իրավիճակը*

Տարեկան վիճակագրական ծրագրով նախատեսված է ժողովրդագրական ցուցանիշներն ամփոփել և հրապարակել եռամսյակային պարբերականությամբ: Սակայն, կորոնավիրուսային (COVID-19) համավարակով պայմանավորված, 2021թ. հունվար-փետրվար ամիսների կտրվածքով որոշ ժողովրդագրական ցուցանիշներ ամփոփվել են շտապ եղանակով և ստորև ներկայացվում են նախնական տվյալները:

2021թ. հունվար-փետրվարին կենսունակության գործակիցը՝ ծնվածների և մահացածների հարաբերակցությունը, կազմել է 92.2%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրված 107.8 %-ի համեմատ:

**Ծննդյան և մահվան դեպքերը, 2019-2021թթ. հունվար-փետրվար**




***ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները, հունվար-փետրվար***

| | Բացարձակ թվաքանակ, մարդ/դեպք | | | 2021թ. բացարձակ ցուցանիշի փոփոխությունը, % | | 1000 բնակչի հաշվով, պրոմիլ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2019թ. | 2020 թ. | 2021թ.* | 2019թ. նկատմամբ | 2020թ. նկատմամբ | 2019թ. | 2020թ. | 2021թ.* |
| Ծնվածներ | 5 501 | 5 389 | 5 495 | 99.9 | 102.0 | 11.5 | 11.1 | 11.5 |
| Մեռելածիններ | 41 | 47 | 78 | 190.2 | 166.0 | 7.4[1] | 8.6[1] | 14.0[1] |
| Մահացածներ | 4 954 | 5 001 | 5 960[2] | 120.3 | 119.2 | 10.3 | 10.3 | 12.4 |
| Բնական հավելաճ/նվազում | 547 | 388 | -465 | -85.0 | -119.8 | 1.2 | 0.8 | -0.9 |
| Ամուսնություն | 2 518 | 1 000 | 2 869 | 113.9 | 286.9 | 5.3 | 2.1 | 6.0 |
| Ամուսնալուծություն | 524 | 388 | 589 | 112.4 | 151.8 | 1.1 | 0.8 | 1.2 |
| 0-1 տարեկան մահեր | 30 | 46 | 42 | 140.0 | 91.3 | 5.5[3] | 8.5[3] | 7.6[3] |
| 0-4 տարեկան մահեր | 38 | 51 | 45 | 118.4 | 88.2 | 6.9[3] | 9.5[3] | 8.2[3] |

[1] 1 000 կենդանի և մեռած ծնվածի հաշվով

[2] Որից 462 դեպքը, ըստ նախնական տվյալների՝ զինվորական գործողությունների հետևանքով (Y 36): Ընդ որում, հարկ է նշել, որ թեև սույն դեպքերի՝ հայտնաբերման և նույնականացման/ճանաչման գործողություններով պայմանավորված, քաղաքացիական կացության գրանցումներն իրականացվել են 2021թ. հունվար և փետրվար ամիսներին, սակայն ժամանակագրական առումով տեղի են ունեցել 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում, և հետևաբար, տվյալների վերջնական մշակման փուլում դրանք կներառվեն 2020թ. մահվան դեպքերի թվակազմում, արդյունքում կվերանայվեն նաև 2021թ.-ի ցուցանիշները:

[3] 1 000 կենդանի ծնվածի հաշվով

**Գրանցված ամուսնության և ամուսնածության դեպքերը, 2019-2021թթ. հունվար-փետրվար**




**ՀՀ մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների, հունվար-փետրվար**
(Աղբյուրը՝ մահվան բժշկական վկայականների հիմքով կազմված քաղաքացիական կացության մահվան վերաբերյալ ակտերի գրանցումները)

| | 2020թ., մարդ | %-ով ընդհա-նուրից | 2021թ.* մարդ | %-ով ընդհա-նուրից | Բացարձակ ցուցանիշի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, % |
|---|---|---|---|---|---|
| **Մահացածների թվաքանակը** | **5 001** | **100** | **5 960**[1] | **100** | **119.2** |
| այդ թվում՝ ըստ պատճառների | | | | | |
| արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (I00-I99) | 2 854 | 57.1 | 2 973 | 49.9 | 104.2 |
| Նորագոյացություններից (C00-D48) | 949 | 19.0 | 834 | 14.0 | 87.9 |
| շնչառական օրգանների հիվանդություններից (J00-J99) | 448 | 9.0 | 447 | 7.5 | 99.8 |
| մարսողական օրգանների հիվանդություններից (K00-K99) | 261 | 5.2 | 235 | 3.9 | 90.0 |
| վարակիչ և մակաբուծային հիվանդություններից (A01-B99) | 27 | 0.5 | 24 | 0.4 | 88.9 |
| հիվանդացության և մահացության արտաքին պատճառներից (V01-Y98) | 135 | 2.7 | 614[1] | 10.3 | 454.8 |
| COVID-19, ՎԻՐՈՒՍ | x | x | 545 | 9.2 | x |
| այլ հիվանդություններից | 327 | 6.5 | 288 | 4.8 | 88.1 |

*/ *նախնական տվյալներ*

[1]Որից 462 դեպքը, ըստ նախնական տվյալների՝ զինվորական գործողությունների հետևանքով (Y 36): Ընդ որում, հարկ է նշել, որ թեև սույն դեպքերի՝ հայտնաբերման և նույնականացման/ճանաչման գործողություններով պայմանավորված, քաղաքացիական կացության գրանցումներն իրականացվել են 2021թ. հունվար և փետրվար ամիսներին, սակայն ժամանակագրական առումով տեղի են ունեցել 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում, և հետևաբար, տվյալների վերջնական մշակման փուլում դրանք կներառվեն 2020թ. մահվան դեպքերի թվակազմում, արդյունքում կվերանայվեն նաև 2021թ.-ի ցուցանիշները: